

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ¹

ԳԵՐՈՐԴՅԱՆ ՀՈՐ, ՄԵՆԵՐԴՅԱՆ Ե ՊԵՐՈՐԴՅԱՆ ԿԵՐՈՐԴՅԱՆ

24 ՆՈՅ. 1929

ՃԵՄԱՐԱՆԻՍ վերաբացման առաջին քանախօսութիւնը մինչդեռ ինձ կը վրճակէր, խորհեցայ անոր նիւթ առնուլ ծիսապատմական կարևոր հարց մը, վրճուած ու տակաւին ոչ կատարելապէս լուծուած: Հայաստանեայց Եկեղեցւոյ գլուխն՝ աւանդական սովորութեամբ մը կ'ընտրուի ու կը կարգուի այդ պաշտօնին՝ ձեռնադրութեամբ և օծմամբ, որ զատ է եպիսկոպոսականէն ու յաւելուած անոր վրայ: Շքեղ բան մ'է՛լ ըստ ինքեան այդ ձևը, որ թէ հինքերէն և թէ նորերէն ունաց նոյն իսկ թելադրեց աւելի ինչ մը նշմարել մեր հայրապետին վրայ՝ քան միւս եկեղեցեաց պատրիարքաց, ինչպէս պիտի տեսնենք: Կ'արժէ ուրեմն՝ որ քննենք զայն լրիւ ու մանրամասն հետազոտութեամբ մը, նկատելով նոյն սովորոյթը միւս ազգերու և մեր մէջ, անոր ծագումը, իսկութիւնը, արարողութիւնը, օծումը և արդիւնքը:

Ա. Միւս ազգերու մէջ. — Գրիստոնէական Եկեղեցին առաքելոց օրերէն քահանայութեան երեք աստիճաններ միայն կը ճանաչէր, սարկաւագութիւն, երիցութիւն և եպիսկոպոսութիւն, և կ'աւանդէր զանոնք՝ ձեռք դնելով ընծայելոյն վրայ: Առաքելաւք՝ առաջին եօթն ստրիտապետ Էդիլն ի վերայ նոցա զձեռք՝: Պողոս ու Բառնաբաս շրջելով յԱլեքսանդրի և ուրիշ կողմեր,

«ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ երիցան»²: Կը յիշուին եպիսկոպոս-երիցունք ալ՝, որ կը կարգուին «քաղաքաց» մէջ³, և որոցմէ են նաև Տիմոթէոս ու Տիտոս, զորս Պողոս կը նշանակէ Եփեսոսի երեսէի հովուութեան⁴. անոնց կը խօսի եպիսկոպոսական յատկութեանց մասին, ի խրատ անոնց ընտրելի եպիսկոպոսաց⁵. որով աւելի կը համոզուինք՝ թէ իրենք ալ ունէին նոյն աստիճանը, և զոր Տիմոթէոս ընդունած էր «ձեռնադրութեամբ» նոյն ինքն Պողոսէ⁶, և սա՝ Բառնաբասի հետ՝ ուրիշներէ⁷:

Եպիսկոպոսութենէն վեր աստիճան չըկար հին Եկեղեցւոյ մէջ, ինչպէս չկայ մինչև ցայսօր: Սակայն ժամանակն եպիսկոպոսական բարձրագոյն աթոռոց ժառանգորդաց համար ստեղծեց առանձին արարողութիւն, անոնց ընտրութեան աւելի պերճութիւն մը, և իշխանութեան՝ արտաքին մեծագոյն նշանակ մը տալու նպատակաւ: Քննելով յունական հին մշտուցը, զոր ընդարձակօրէն հրատարակեց Գոյար, անոր մէջ չգտայ պատրիարքի օրհնութիւն: Ընդ հակառակն այդ արարողութիւնն ունին Աղեքսանդրիոյ և Ասորոց Յակոբիկականք, Նեստորականք ու Մարոնեանք, որոց կարգերն ամփոփեցին Ռնոդոտ և այլք, ու լաւ ևս Դենզինգեր⁸,

1. Այս յօդուածը քանախօսութիւն մըն է զոր Մեծարգոյ Հեղինակը կատարեց վանքիս Ճեմարային սոյն տարեշրջանի առաջին զուարթան մէջ, և խմբագրութիւնս ուրախ է որ կրնայ իր Յարգոյ ընթերցողներուն ներկայացնել սոյն գրութիւնը՝ կրկնապէս շահեկան թէ՛ նիւթին համար և թէ՛ արդէն իսկ շատ ծառայօք քանախօսութիւն մը իւրապէս քննուած և ուսումնասիր-

ուած քաղաքի համար:

Ի. Խ.

2. Գրք. Զ. 6. — 3. Անդ. ԺԳ. 22. — 4. Ա. Տիմ. Գ. 1-2. Տիմ. Ա. 7. — 5. Տիմ. Ա. 5. — 6. Ա. Տիմ. Ա. 3. Տիմ. Ա. 5. — 7. Ա. Տիմ. Գ. 1-7. Տիմ. Ա. 7-9. — 8. Տիմ. Ա. 5-7. — 9. Բ. Տիմ. Ա. 6. 10. Գրք. ԺԳ. 3. — 11. Denzinger, *Ritus Orientalium*, Weceburgi, 1861.

հաւարուած զանազան միջնադարեան աղ-
բիւրներէն: Հոռմայ հայրապետը ալ կ'օրհ-
նուին այժմեան սովորութեամբ: Թէ եւր
հաստատուած է արարողութիւնը յիշեալ
արեւելեայց մէջ, աղոր ճշդումը կապ ունի
հայ ձեռնադրութեան ծագմանը հետ: Երով
նախ զայս կը ֆիայ ինձ բնեւ, և ապա
որոնել այլոց հաստատման հաւանական
ժամանակը:

Բ. Երբեմն անգոյ մեր մէջ, — Բարձր
հնութեան մը յարգը շունչ հայ ձեռնա-
դրութիւնը: Սկսելով մեր առաջին հայրա-
պետէն՝ Լուսաւորէն, Ազաթանգեղոս կը
պատմէ՝ թէ Կեսարիոյ մէջ անոր աւան-
դեցին երկու աստիճաններ միայն. «զպա-
տիւ խոնարհութեան քահանայութեանն
Քրիստոսի, և զբարձրութիւն եպիսկոպո-
սութեան փառաւորութեան Աստուծոյ՝ Ըզ-
պատիւ մեծ՝»: Եպիսկոպոսութիւնն է ու-
րեմն հող մեծագոյն պատիւը, և անկից
զատ ձեռնադրութիւն կամ օրհնութիւն
չկայ: Նոյն ս. Գրիգոր իրեն օգնական
եպիսկոպոս կը ձեռնադրէ զԱրիստակէս
որդին, որ «յետ նորա կայաւ զտեղի հոյ-
րեմեացե՞», առանց երթալու ի Կեսարիա
ձեռնադրութեան, ինչպէս զնացին նա-
խորդն ու յաջորդները: Նոյնպէս և Վրթա-
նէս կանխաւ եպիսկոպոս ձեռնադրուած
հօրէն՝ կամ եղբօրէն, «հոն քահանայա-
պետ յաթոռն հօրն» առանց երկրորդ ձեռ-
նադրութեան՝: Ուրեմն հայրապետական
ձեռնադրութիւն կամ օրհնութիւն մը չկայ
հող:

Փաւստոս արդարեւ կ'ըսէ՝ թէ յետոյ
«ետուն ի կարողիկոսութիւն զՅուսիկն ձեռ-
նադրեց», կամ զՓառնէ «ձեռնադրեցին ի
կարողիկոսութիւն Հայոց մեծաց», կամ
«ձեռնադրեցին զԴանակն ի կարողիկոսու-
րիւն», կամ «ձեռնադրեցին զՉոնակն ի
կարողիկոսութիւն Հայոց», որոնք սակայն
զատ ձեռնադրութիւն մը չեն ցուցներ:

այլ եպիսկոպոսականն իսկ, ինչպէս Նոյն
պատմիչը կը զգացնէ ս. Ներսէսի հայրա-
պետութեան առթիւ՝ թէ «ձեռնադրեցին զնա
և հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսու-
րեանն»⁹: Այս պատճառաւ նաև Պապ՝
Յուսիկ Բի, որ արդէն «եպիսկոպոս» էր,
«ետ հրաման ունել զտեղի հայրապետացն»,
և Ասպուրակ պարզապէս «կիտց զԼուի
եպիսկոպոսաց՝, առանց ուրիշ ձեռնա-
դրութեան մը:

Կը բնենք յաջորդ հայրապետաց ըն-
տրութեան յիշատակարաններն այլ, և ոչինչ
կը գտնենք ի նպաստ կաթողիկոսական
ձեռնադրութեան: Ս. Յովսէփ պատուով
կաթողիկոս, ժամանակի քաղաքական
դժուարութեանց պատճառաւ եպիսկոպո-
սական կարգէն անգամ զուրկ մնաց՝, ինչ-
որ արգելք մը չեղաւ անոր լինելու «զուրկ
ամենայն Հայոց քահանայութեանց», ինչ-
պէս կը վկայէր Ղևոնդ, իշտունեաց ե-
պիսկոպոսին համար ևս ըսելով՝ թէ «սա
զկարգ օծման ըստ ճշմարիտ և արդարեւ
քրիստոսատուր ձեռնադրութեան մերոյ
օրինաց զկատարելաբն ունի՞», քան զոր
վերագոյն ձեռնադրութիւն չկար ուրեմն:
Եւ երբ Պարսից արքայն կը սպանաւ
Իիւսի՝ առնուլ կաթողիկոսութիւնը, կը
պատասխանէր՝ թէ կրնար զինք պաշտօ-
նազուրկ ընել. «Իսկ յազգա եպիսկոպո-
սական ձեռնադրութեան», — որ միակ
ունեցածն էր, — ոչ ոք՝ կ'ըսէր՝ կարող է
առնուլ ինձմէ՞¹⁰, Այս է ձեռնադրութեան
վիճակը Դ—Ե դարերուն, ակներև ու հետի
ամէն կասկածէ:

Կը համինք մինչև Է դար, ուր Սերէոս
կը պատմէ՝ թէ 607ին «նստուցին (ոչ թէ
ձեռնադրեցին) զԱրաւաւմ զՍշտունեաց ե-
պիսկոպոսն յաթոռ հայրապետութեան»¹¹:
Այդ հանդիսին ընթերակայ էր և Սմբատ
Վրկան մարզպանը, որ կը գրէ՝ թէ Արաւ-
համ պարզապէս «հայրապետ կարգեցաւ»¹²,

1. Աղաթ. Վնեւ. 1862, էջ 604. — 2. Նոյն՝ 643.
— 3. Կաղանկ. Մոսկու, 1860, 28. — 4. Փաւստոս.
Վնեւ. 1862, 6. — 5. Նոյն՝ 80, 44, 45, 123. —
6. Նոյն՝ 73. — 7. Նոյն՝ 226, 264. — 8. Հմմտ. Կա-

րեւոր խեղիքներ, 230-32. — 9. Փարպեցի. Վնեւ.
1873, 235. — 10. Նոյն՝ 348. — 11. Սերէոս. Կ.
պոլիս, 1851, 108. — 12. Գրիգ. Գրիգոս, 169.

ինքն ալ լռելով վերստին ձեռնադրութիւնը լինող հակառակն մայրագոմեցին Յովհաննէս, ժամանակակից Աբրահամու երբորդ յաջորդին՝ Եզրի, առ Դավիթ Մեծկողմանց եպիսկոպոս թղթին մէջ, զոր կաղանկատուացւոյն շարունակողը յառաջ կը բերէ, կ'ըսէ՝ թէ «նստուցին զԱբրահամ ճշմարտ և ընտիր այր, որ զժողովն Քաղկեդոնի նստի ետարձ նշովիւց, և ապա նաև նաղրեցաւ»¹, Բայց ըստ իս տարօրինակ և անտեղի է պայմանական կաթողիկոսութիւնը, անյիշատակ բուն ժամանակակից միւս յիշատակարանաց մէջ ևս՝ զորս կը պահէ թողոց գիրքը: Կարելի է՝ թէ հող մատր կայ ազուկան կոչողին, որ կը գրէր յետ 869ին, երբ կաթողիկոսական ձեռնադրութիւնն արդէն կար. և որ Աբրահամու առ Կիւրիոն թղթէն ալ կոչում կ'ընէ՝ յայտնապէս խարդախելով ընագիրը՝² Եթէ անարատ իսկ լինի Մայրագոմեցւոյն վկայութիւնը, կրնանք հետևենել՝ որ սա չէ յիշած, որով զուցէ կ'անգիտանար Աբրահամու կանխաւ եպիսկոպոս լինելը, և անոր ձեռնադրութիւնը՝ կ'իմանար եպիսկոպոսականը, իբր ընդունուած հայրապետութեան հետ: Անկասկած այս տեղեկութենէն խարուեցաւ Ուխտա, նաև, որ կը գրէր ժ. զարու վերջերը, ըսելով՝ թէ զԱբրահամ կաթողիկոս «ձեռնադրեն զկին սրբոյ զատկին՝ յաւուր կիրաւ կէի», և չյիշելով՝ թէ արդէն եպիսկոպոս էր՝³ Այս պատմչին յեցած՝ նոյն տեղեկութիւնն երկրորդեց (ըմանեան ևս, ընդունելով ճանդերձ զայն կանխաւ եպիսկոպոս, իսկ Ն. Վ. Միլիք թանգան հիմ. նուելով Աղուանից պատմչին վրայ, հայրապետական ձեռնադրութեան սկզբնաւորութիւնը դրաւ Աբրահամին՝⁴:

Իրարու փոխանցուած սխալ մ'էր այդ, զոր կը հերքէ Աբրահամու յաջորդը կո-

միտաս ևս, եպիսկոպոս Մամիկոնէից, վերայելով տակաւին իւր անձին համար՝ թէ 615ին «յաջորդեցայ (ոչ ձեռնադրեցայ) ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց»⁵: Այսպէս նաև Ներսէս Շինող, եպիսկոպոս Տայոց, 641ին «յաջորդեցաւ» կամ «կոչեցաւ (ոչ ձեռնադրեցաւ) յաթոռ կաթողիկոսութեան», կ'ըսէ Սիւրենոս՝⁶ Այս բայերու մէջ ձեռնադրութիւն տեսնելու համար՝ հարկ է հեռացնել իրենց ընտանի նշանակութենէն, ինչպէս ըրաւ Օրմանեանի Երեմիայութիւնը, Կոմիտասի «յաջորդեցայն» մեկնելով «ընտրեալ կաթողիկոս», և յարելով՝ թէ «ազգային ընտրութենէն և պետական հաստատութենէն ետքը նուիրական արարողութեան կամ օծման ալ պէտք ունէր, որպէս զի կանոնաւորապէս կաթողիկոս ըսուէր»⁷: Այս պէտքը կամ պայմանն արդի խորհողի պատրանք մ'էր, ինչպէս կը տեսնենք յետոյ: Ոչ, այդ շըրջանին դեռ աւելորդ է ձեռնադրութիւն փնդուել ի Հայս: Եւ ասոր փաստերէն մին ալ է կաթողիկոսօրհնէից սեպական կարգի մը չզոյրութիւնը. այնպէս որ երբ յետոյ իրապէս սկսի ձեռնադրութիւնը, պիտի կատարուի անյատուկ եղանակով մը, եպիսկոպոսական կարգին կրկնութեամբ, ինչպէս պիտի ցուցնեմ ընդ Նուպ, Եւ իթէ սեպական կարգ մ'իսկ չկար, ապա զայն պահանջող ձեռնադրութիւնն ալ չկար, մինչդեռ միւս երեք աստիճանը ի հնուց ունէին իրենց յատուկ կարգերը:

Այնուհետեւ ցթ. զար մեր հայրապետաց ձեռնադրութեանց մասին ժամանակակից հաւատքի տեղեկութիւնը կը պակասին: Յովհաննէս պատմիչ, որ կը շարադրէր իբր 923ին, կը յիշէ Յովհ. ովայեցւոյ ձեռնադրութիւնն 832ին. «յետ սկզբան ձեռնադրութեան նորա», որոյ տեսակը յայտնի չէ՝ ոչ իրեն և ոչ մեզ: Նոյն հան-

1. Կաղանկ. 213. — 2. Հմմտ. անդ՝ 214, և Գր. Թորոց. 194. — 3. Ռիւստանէս. Վերջաւ. 1871, Ի, 61. — 4. Ազգայութ. 616-17, Հաջորի չեմ անուր իւր միւս ըսածք ս. Սահակայ մասին, թէ «քահանայ ըլլալը ստոյգ է, և եպիսկոպոսութիւնն ալ հաւանական. իսկ կաթո-

ղիկոսութիւնը առած պիտի ըլլայ հայ եպիսկոպոսներէն» (անդ՝ 262), որ կրնայ իմացուիլ թէ ընտրութեամբ և թէ ձեռնադրութեամբ. — 5. Հայոց եկեղ. իրաւ. Շուշի, 1905, Բ, 116-18. — 6. Գր. Գրից, 218. — 7. Սեբ. 172, 220. — 8. Ազգայութ. 659.

գամանաց մէջ է և Ջաքարիա, զոր 854ին աշխարհական վիճակէն «ձեռնադրեմ ի նայրապետութիւն»¹։ Ոչինչ կրնանք հետեցնել այս երկու սեղմ տեղեկութիւններէն՝ ի նպատակամ հակառակ ձեռնադրութեան գոյութեանն այդ կաթողիկոսաց օրերուն։

Գ. Անոր հաստատութիւնը։ — Սակայն քիչ յետոյ՝ նոյն Թ դարուն մէջ՝ արդէն լոյսը կը ծագի մեր առջև, ու կը սկսի երևիլ ուրոյն կաթողիկոսօրհնէք մը։ Աղուանից աթոռն ընդհանրապէս հպատակ եղեր է հայկականին, և հետևող մեր սովորութեանց, լեզուին ու կարգաց։ 877ին անոնց Յովսէփ կաթողիկոսը կը վախճանի, և նոյն վիճակէն «Մեծկողմանց եպիսկոպոսն Սամուէլ» ինքնազլխարար կը նրստի անոր տեղը։ Խամայէլ անուն եպիսկոպոս մը կը ձեռնադրէ, և «զանկատարն ասեռս զձեռնադրութիւն յիւրմէ եպիսկոպոսէն», կը գրէ անոնց պատմէին շարունակողը։ Աղուանից իշխանը, որ այդ պահուն պատերազմով զբաղած էին, լսելով այդ լուրը՝ կը վերդիին ու կը բողոքեն մեր Գէորգ Բ հայրապետին, որ կը հանդարեացնէ զանոնք, և ըստ եղեալ կարգադրութեան՝ անոնց առաջնորդն ի Գուրի կ'երթայ, և «զերկրորդն առնու ձեռնադրութիւն անձնահաճն Սամուէլ ի Գէորգայ Հայոց կաթողիկոսէ»²։

Նոյն Գէորգ 893ին գերի գնաց Տաճկաց, և այդ պահուն վախճանեցաւ Աղուանից յիշեալ կաթողիկոսը։ Անոնք զՅովսէփն, որ մեր հայրապետական «դրան եպիսկոպոս» էր, կը հրաւիրեն, «և անդէն ձեռնադրի առանց կամաց տեսնել Գէորգայ»³։ Կամ ըստ Անանիա մոկացւոյն՝ «կարգեցին իւրեանց կաթողիկոս»⁴։ Աղուանից արքայն Համամ մեծ փրկանք տալով՝ ազատեց մեր հայրապետը, որ բարկացած իւր եպիսկոպոսին ինքնազլուի գործին, «լուծանէ զնա ի պատուոյն»⁵։ Յետոյ զիջանելով արքային խնդրանաց,

«առ հարկի՝ իբրև մեծ իմն երախտիս համարեալ՝ կրկին զՅովսէփն ձեռնադրեք», կը գրէ Մովսէսը⁶։

Ինչ էին այդ ձեռնադրութիւնը՝ տրուած արդէն եպիսկոպոսաց՝ անգամ մ'Աղուանից եպիսկոպոսներէն, և երկրորդ անգամ Հայոց հայրապետէն, որոցմով անոնք կտրողկոս կը կարգուին Աղուանից, ըստ վկայութեան երկու մերձաւոր գրիչներու։ Եթէ ոչ կաթողիկոսական ձեռնադրութիւնն իսկ, զատ եպիսկոպոսականէն, որ ուրեմն արդէն կայ հոգ։ Եւ եթէ մերս Գէորգ է՝ որ կու տայ զայն երկրորդ անգամ, այն հետևի՝ որ Հայոց և իրեն ընտանի էր կրն, և ինքն ալ ստացեր և ունէր նոյնը։ Անանիա չի հաճիր Յովսէփնու երկրորդ ձեռնադրութեան, իբրև «արտաքոյ սուրբ գրոց», և կը վերագրէ մեր հայրապետին «կարեաց վախկոտութեան»։ Չէր գիտեր՝ թէ նա նոյն սխալը գործած էր նաև Սամուէլի վրայ, և ձեռնադրութեան կրկնումն անոր վրէժ։ Ինչորոշութեան պահանջն էր, ոչ թէ այլոց, և ոչ արդիւնք երկրիդի։ Եթէ ուզէ՝ կըրնար վերահաստատել զանոնք՝ առանց նոր ձեռնադրութեան։

Նոյն Մովսէսոյն օրով, նստած 941ին, այնքան սովորական է մեզ հայրապետական ձեռնադրութիւնը, որ իւր ու խոսքով անձեռնադր մէջ անոր մասին վէճ ծագեցաւ, և որուն պիտի անդրադառնանք ապա։ Յետ Անանիայի՝ մեր կաթողիկոսունք կը շարունակեն միշտ զատ ձեռնադրութիւն ստանալ։ Խաչիկ Ա, կանխաւ եպիսկոպոս Արշարունեաց, իւր նախորդը Ստեփանոս 970ին զայն «ձեռնադրեաց յաթոռ իւր», Կ'ըսէ Մատ. ուռայեցի 1186ին⁷։ Արիստակէս Լաստիվերտցին կը վկայէ ԺԱ դարու կիսուն՝ թէ Պետրոս Գետադարձ իւր տեղը կը զնէ զԽաչիկ Բ, «որ զձեռնադրութիւն հայրապետութեան վաղնջուց ընկալեալ էր» 1035ին⁸։ ԶԳրիգոր վկայասէր մեծն՝ «արմատաւոր ձեռնադրութեամբ

1. Յովհ. 4թ. Երեւ. 1867, 147, 161. — 2. Կազան. 268. — 3. Նոյն՝ 277. — 4. Արարատ, 1897, 138. — 5. Կազան. 269, 277. — 6. Արար.

138-39. — 7. Ռուս. Երեւ. 1869, 49. — 8. Լաստ. վէստիկ, 1841, 60.

և հոգեւոր օժմամբ նստուցանեն յաթոռ կաթողիկոսութեան¹»։ Նոյն ինքն յետոյ գիշորգ վարդապետ «ձեռնադրեաց կարողիկոս» փոխանակ իւր²։ Բարսեղ կթղ նախ ձեռնադրուած նոյն վկայատիւնն եպս. Անուր³, հայրապետական աթոռը բազմալու համար՝ զնաց Աղուանից Ստեփանոս կաթողիկոսին, իբր Հայաստանեայց վիճակին մէջ գոնուող բարձրագոյն իշխանութեան, որ իւր եպիսկոպոսաց հետ զայն կրկին անգամ «ձեռնադրեցին կարողիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի»⁴։ Շնորհալուոյն եղբոր համար կը կարդանք՝ թէ Նախ «ձեռնադրեցին զԳրիգորիս եպիսկոպոս ի վերայ ամենայն տանն Հայոց. և ի նմին աւուր տան (նաև) զձեռնադրութիւն կարողիկոսութեանն ի վերայ աթոռոյ սրբոյն Գրիգորի»⁵։ Կամ ըստ ուրիշ վկայի մը՝ Բարսեղ կթղ. ինքնին անոր վրայ «կատարէր զկարգ եպիսկոպոսութեան և հսկասպետութեան»⁶։ այն է յաջորդաբար երկու կարգեր։ Անոր հայրազատն ու յաջորդը՝ Ներսէս, նախ եպիսկոպոս ձեռնադրուած եղբորէն⁷, յետոյ նոյն Գրիգորիս կրկին «ձեռնադրեաց զնա յաթոռ կաթողիկոսութեան ազգիս Հայկայ»⁸, որուն կը վկայէ ձեռնադրեալն ևս⁹։ Եւ Ն. Լամբրոնացին ասոր յաջորդին Գր. Տղայի մասին կը պատմէ՝ թէ յառաջ «եպիսկոպոս» կը ձեռնադրուի Գրիգորիսէ ու Ներսիսէ, և ապա եպիսկոպոսաց ժողովով «կարողիկոս զընտրեալն օծեալ»¹⁰։ Այսպէս սովորութիւնս կը մնայ ու կը յարատեւէ անընդհատ Հեւտագայ գարեբու մէջ ևս, ու մինչև ցայսօր՝ թէ յիշմամբին և թէ կիլիկիոյ զոյգ աթոռոց վրայ։

Գ. Զեռնադրութեան խկոյրիւնը. — Ակնաբեկեցինք վերև Ան. Մոկացւոյն ու Խոս. Անձնացւոյ վիճաքանութեան այս ինքրոյս շուրջ, որոյ մասին նոյն հայրապետը թուղուց ուղարկու գրուած մը, Պատմաւ յաղագս զխոսքովն եզրովնսն, հրատարակուած

արդէն¹¹, Նարեկացի խօսնակին գիտնական հայրը, զազանի քաղկեդոնիկ և յունամէտ, ընդդիմութիւն մ'ունէր կաթողիկոսական ձեռնադրութեան տրուած նշանակութեան դէմ. և իւր զանազան տեսութեանց մէջ կ'ըսէր ևս՝ թէ ձեռնադրութիւնը ուրիշ բան չէր (այն շրջանին), բայց եպիսկոպոսականին կրկնութիւնը. «Զեռնադրութիւն ոչ է կարգեալ որիշ հայրապետութեան, այլ նոյնն (այսինքն եպիսկոպոսականն) երկրորդի», միակ տարբերութեամբ կոչուած ձեռն մէջ՝ թէ «զայս ոք կոչեն յեպիսկոպոսութեան հայրապետութեան անուն»։ Ուսկից կը հետեցնէր՝ թէ «կոչումն ձեռնադրութեան չկայ յեպիսկոպոսութեան ի հայրապետութեան» իբրև ուրոյն կարգ, այլ սոսկ յարա հայրապետական։ Եւ ասկից ալ կ'եզրակացնէր՝ թէ «միապէս ունին զանունն եպիսկոպոսութեան հայրապետն (և եպիսկոպոսն), նոյնգունակ և զպատմութեան¹²»։ այսինքն թէ կրկին ձեռնադրութեամբ՝ եպիսկոպոսականէն վեր աստիճան մը չէր ստանար հայրապետը, այլ կը բարձրանար արտաով կամ իշխանութեամբ միայն։ Եւ հուսկ՝ թէ հայրապետական ձեռնադրութեան «ոչ լինել յայլ ազգս» այն ևս կը տկարացնէր անոր նշանակութիւնը։

Անանիա, որ աւելի ջղերով կը տրամաբանէր քան ուղեղով, և չէր կրնար մարսել մրցակցին պատճառարանութիւնը, կը պատասխանէր՝ թէ նախնաց անձաւնօթ էր «այսպիսի թարմատար և շամբուշ կարծիք», որ «զառաքելոցն զնախակարգեալ՝ հաստատութեամբ երկնից՝ զաթոռ երկցս երանեալ Լուսաւորչին, և նորին զօրացեալ Հոգւով յաջորդացն թուակցութիւն յիսնացանակ երբեք հանդերձ աստուածաբնիկ երամս զրպարտեալ նախատանօք, և ի վայր իշուցանել ջանայցէ»։ Ինքն զոհ էր եպիսկոպոսական ձեռնադրութեան կրկնութեամբ, «բաւական համարեալ զնոյն կոչումն. զի կրկինն

1. Սոփեք, վճենթիկ, 1853, ԺԳ, 18. — 2. Ուս. 280. — 3. Նոյն՝ 253. — 4. Նոյն՝ 266. — 5. Նոյն՝ 412. — 6. Սոփեք, ԺԳ, 32. — 7. Անդ. 34. —

8. Անդ՝ 66. — 9. Նամականի, վճենթ. 1838, 32. —

10. Գովեստ Ի Ն. Շնորհալու, զուր. վճենթիկ, —

11. Արարատ. 1897, 275. — 12. Անդ՝ 278, 276, 277.

այն հոգի զօրանայ ի վերայ՝ որպէս յիշդայէ յեղիակէ՝»¹։

Պատասխանելով խորհրդու միւս ընդդիմադրութեան՝ թէ ուրիշ եկեղեցիք չունէին մեր արարողութիւնը, կ'ըսէր՝ թէ «յայլ ազգաց ոչ կարես ցուցանել զչլիւնելն, իսկ ի մերումս բազում ինչ ի կարեւորացն ոչ գտանի թարգմանեալ»²։ Վերջինս փախստեան ճանապարհ մ'էր։ Իսկ միւս ազգերու մէջ իւր տեսածն էր հետեւեալը. «Զմինչ իմանաս, կ'ըսէր, զխորհրդածութեանն ժամն, զոր թագաւորն հրամայէր ի վերայ Պրովկի, յորժամ յեպիսկոպոսութենէ ի հայրապետութիւն կոչէին՝ ըստ շարածութեանն Սոկրատայ»³։ Կ'ակնարկէր տեղեկութեան փոքր Սոկրատայ⁴, որ միջնադարեան հայ խմբագրութիւն մ'է, և մեծին մէջ կը պակսի տեղեկութիւնը⁵։ Ինչպէս կը տեսնենք, Անանիա կ'ապաւինի այդ անվաւեր աղբիւրին, հակառակորդին հետ համոզելով զմեզ՝ թէ արեւելեան միւս եկեղեցեաց հայրապետական օրհնութեան սովորութիւնն ու կարգեր, որոց ակնարկեցի կանխաւ, տակաւին զոյութիւն չունէին այդ դարուն, որպէս զի զանոնք փաստ առնուր Սոկրատին։ Այլ յետոյ հնարուեցան, շատ հաւանօրէն հայ սովորութեան ազդեցութեան ներքեւ, նկատելով մեր եկեղեցւոյ զրից կարեւորութիւնն ու հարձաւորութիւնն անոնց։ Անշուշտ նախ մին ընդօրինակեց մերը, և միւսերը հետեւեցան անոր։

Այդ վէճն առանց հետեւանաց պիտի չանցնէր։ Եւ արդարեւ յետոյ Հայք պէտք զգացին հայրապետական ուրոյն կարգի մը ստեղծման, որպէս զի ամէն կասկած կամ երկդիմի մեկնութիւնք բարձուին։ Արոր օրինակը կը գտնենք վանագոս երեք զըրչազրաց մէջ, 1345 ու 1365 ամաց, և մի նոտարագիր⁶։ Օրինակներ ունի Կ.պոլսի ազգային մատենադարանն ալ, որոց հնագոյնը, սխալագիր, լոյս տեսաւ Արեւելեան

մատոյ մէջ⁷, և որ ըստ կրկին յիշատակարանաց հանուեր է «Կոստանդնի կաթողիկոսի» կամ «Կոստանդնի լամբրոնացւոյ» օրինակէն։ Մեր նոտարագիր օրինակին ծայրն ունիւնք նոյն հայրապետի յիշատակարանն իսկ՝ թէ «Կոստատոս Կոստանդին կաթողիկոս գտայ հայրապետացն Հայոց (մաշտոցը) գրեալ ձեռամբ սուրբ հօրն մերոյ Ներսէսի արքեպիսկոպոսի Տաբաթնի, և ետու գրել աստ, որ է այս»։ Կը հետևի՝ որ այս մեր օրինակն անմիջական ու հաւատարիմ ընդօրինակութիւնն է՝ յիշատակարանով հանգերձ՝ Կոստանդնի գաղափարէլ տուածէն։ Եւ կը բովանդակէ չորս մեծ ու հանդիսաւորագոյն կանոնները. օրհնութիւն մեռոնի, ձեռնադրութիւնք եպիսկոպոսի ու կաթողիկոսի, և օրհնութիւն թագաւորի։

Ինչ կը նշանակէ ադոնց Լամբրոնացիէն դիտար. ընդօրինակութիւն թէ շարադրութիւն։ Ջանանք ճշդել. Գիտենք՝ որ կարգերէջ վերջինը՝ թագաւորականը՝ անոր թարգմանութիւնն էր՝ յարմարութեամբ⁸։ Իսկ իւր կենսագիրը կը վկայէ՝ թէ նաև «գաղղարեաց զաստուածային պատարագին և զձեռնադրութեանցն և զամենայն խորհրդական գործառնութեանցն եկեղեցւոյ կատարմունս, և զքրիստեան իրից թարգմանութեամբ»⁹։ Լամբրոնեան օրինակիս եպիսկոպոսօրհնէնքը կրիկեան ձևն է, որ շարաթերեկոյին ընտելութեան կը նստեցնէ հայրապետն եկեղեցւոյ մէջ, «զգեցեալ հանդերձ անգօսի, և ուրար և փորժեաց շուրջառ, գաւազան ի ձեռն և միտք ի գլուխն»։ Եւ որովհետև միթըր մտաւ ի Հայս 1185ին՝ Գր. Տղայի և Լամբրոնացւոյն օրով՝ վերջնայս վկայութեամբ իսկ¹⁰, ուրեմն եպիսկոպոսօրհնէնք մէջ և անկասկած կայ Տաբաթնի առաջնորդին ձեռնադրութեանց զարդարող մատը։ Յետոյ կաթողիկոսօրհնէնքն ալ կապուած է նոյն կարգին հետ, գրելով՝ թէ ընտրելոյն վարուց և հաւատոց ընտու-

1. Արարատ. 279. — 2. Անդ. 278. — 3. Անդ. 279. — 4. Տգ. Վրդգոս. 1897, 167. — 5. Հմմտ. Արար. 1897, 279, 281. — 6. Թ. 1173, 960, 1141. — 7.

1903, էջ 289. — 8. Հայագիտութ. 2. Աւիշանի, 431. — 9. Անդ. 422. — 10. Հմմտ. Պատմ. հայ տրգ. 402.

թիւնը կը կատարուի՝ «որպէս և կայ գրեալ ի ձեռնադրութիւն եպիսկոպոսին» և մեծ է կազմական նմանութիւնն ևս երկուքին մէջ։ Որով հոս ալ կ'երեւի եպիսկոպոսականը կերտող ձեռքը։ Արդ՝ եթէ Կոստանդնի տեսած չորս կարգերուդ գրիչը Լամբրոնացին էր, յայտնի է՝ թէ կաթողիկոսական կարգին զարդարիլն ալ ինքն էր, և իրեն կը պարտինք կարգիդ յօրինումը, մեր այդ արեամբ, մտքը, հոգւով և աստիճանով ազնուականին, հայ փառքերէն միոյն։

Ե. Արարողորդինը։ — Չափազանց պարզ է հրահանգաց կողմանէ, որով չենք կարող տեղեկանալ անոր մանրամասնութեանց։ Նախ կը դնէ հայրապետին ընտրութեան կերպը՝ մասնակցութեամբ բոլոր ազգին, ամենայն ժառանգաւորաց և երկոտասան եպիսկոպոսաց։ Իսկ ձեռնադրութեան նախորդ երեկոյին հսկումն կը լինի։ Առաւօտուն՝ պատարագէն յառաջ հարցաքննութիւն ընտրելոյն վարուց ու դատարարութեան։ «Ապա ելանն ի խորանն», և կը սկսին սաղմոս մը, քարոզ մը՝ «Աղաչանքս զմարդասէրն Աստուած», և քառասուն «Տէր ողորմեա», որուն կը յաջորդէ՝ մայրաքաղաքացի եպիսկոպոսն՝ կոչման սովորական բանաձեւը, յարմարած այս հանդիսին, որ է այսպէս։ «Աստուածային և երկնաւոր շնորհք, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչեն զայս անուն յեպիսկոպոսութենէ ի կարողիկոսութիւն (բարեփոխութեամբ նախկին ձեւին), տանն թորգոմայ ի վերականցութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն և յառաջնորդութիւն, ըստ վկայութեան անձին իւրոյ և ժողովրդեանն։ Էս դնեմ ձեռս ի վերայ, ամենեքին աղօթս արարէք, զի արժանաւոր լիցի զիշխանութիւնն առաքելական տօնոյն անբաւատ պաշտել առաջի սեղանոյ Աստուծոյ»։ Կը յաջորդէ երկար աղօթք մը՝ «Փահանջամբ զքէն Աստուած մշնջնաւոր»։ Պարձեալ սաղմոս մը, զանազան ընթերցումաց հին ու նոր կտակարանէն, աւետարան, և «Աստուած մեծ սքանչելագործ գորութիւն» եղանակաւոր

քարոզը՝ մի կամ երկու եպիսկոպոսէ։ Յետ որոյ երկար աղօթք մը, «Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց», զոր կը պաշտէ «առաջին կաթողիկոսն», բացաւորութիւն՝ որ ուղղաքրական սխալ մը կը թուի, կրկնուած և յետոյ։

Հոս «զգեցուցանեն» ընտրելոյն հայրապետական տարազը, որոյ մասունքը կը թուէ մի առ մի, և որոց թիւն ու նկարագիրը տուած եմ Տարագի պատմութեան մէջ, և հոս չեմ կրկնել։ Անոնց մէջ պատմականօրէն ամենէն ուշագրաւն է «քոյ երկտակ ի գլուխն», որ յաճախ կը յիշուի մեր քով՝ սկսեալ է դարէն, և հայրապետական իշխանութեան զլխաւոր նշանակը նկատուած է՝ Նոյնն ի գործածութեան էր նաև նեստորական Ասորոց քով, և պատրիարքի ձեռնադրութեան պահուն՝ հանդիսապետը «գիցէ քոյ ի գլուխ ընտրելոյն», կ'ըսէ իրենց կարգը։ Մեր կաթողիկոսօրէնները կը յաւելու. «Էւ այդպէս նստուցանեն յաթոն, և առ հասարակ ամենեքեան, քահանայքն և ժողովուրդն համբարեն զաջն», զանազան պատշաճ շարականներ պաշտելով։ Կը յաջորդէ պատարագը հայրապետէն, և եպիսկոպոսը ու բոլոր կղերը սեղանոյն յաջ ու ձախ կողմը կը կանգնին զգեստաւոր՝ «Ի սպասու հայրապետին սրբոյ»։ Աւարտելուն՝ դարձեալ սաղմոս, ընթերցուած մը Պօղոսէ և աւետարան։ Էւ սկսանի առաջին կաթողիկոսն շարական՝ Այսօր ուրախացեալ ցեծան։ Էւ երթան մինչ ի տեղի կերակրոյն»։ Այսքան է լամբրոնեան կարգը, որոյ հիմնական մասունքը, որ են զուգաղօթքներն ու երգով քարոզը, կը տարբերին եպիսկոպոսական կարգի ունեցածներէն։

Համեմատութիւն մը ծանօթ արեւելեան ձեռնադրութեանց հետ՝ ինձ ցոյց տուաւ՝ որ մերն անոնց հետ ևս կազմախօսական սերտ կապ մը չունի՝ ոչ հրահանգաց և ոչ աղօթից մէջ։ Աւելի ճոխ են անոնց հրահանգօց ու շարժումներով քան զմերը։

1. Պատմ. հայ տրգ. 393-94. — 2. Denzin. II, 245.

Աղեքսանդրեանը մերթ շերկայ բոլոր եպիսկոպոսաց, մերթ զլիաւորին, կամ զլիաւորին ու երկրորդին ձեռք զնեւ կու տայ ընտրելոյն վրայ¹։ Մարոնեանց ըով ընտրութիւնը կը կատարեն երկոտասան աւելի կամ պակաս եպիսկոպոսներ, և ձեռնադրողը մէկ հոգի է²։ Հռոմայ հայապետեան շերկապապէս կ'օրհնութի միայն՝ առանց ձեռնադրութեան³։ Գալով ընտրելոյն աստիճանին, աղեքսանդրեան բանաւ ձեռք կը կոչէ զայն «ի քսանապետութեան կարգի յարեպիսկոպոսութիւն մեծի քաղաքին Աղեքսանդրիոյ»⁴։ Անտրոքացի և երուսաղեմացի նեաւորական Ասորիք, եթէ ընտրեան եպիսկոպոս էր, կրկին անգամ կը ձեռնադրէին զայն՝ Հայոց պէս, մինչ Եսկոբիկեանց այդ պարագային նոր ձեռնադրութիւն չէին տար, այլ սինհոդական թղթով կը կարգէին զայն մետրապոլիտ, կաթողիկոս կամ պատրիարք⁵։

Դառնանք մեր ուշադրութիւնը կեդրոնացնել հայ արարողութեան քանի մը կարեւոր կէտերուն վրայ, լրացնելու համար լամբրոնեան կարգի թերին⁶։

1. Առաջինն է ձեռնադրութեան մասնակցող եպիսկոպոսաց թիւը։ Եթէ եպիսկոպոսին ձեռնադրիչ պիտի լինէին երեք վիճակակիցներ⁷ ըստ նիկեական սահմանին, զոր յետոյ պիտի տեսնենք, այդ թիւն ընդ հակառակն կը բազմանայ արքեպիսկոպոսաց վրայ՝ թէ հայ և թէ միւս եկեղեցեաց մէջ, առանց որոշ չափի մը։ Սիսեւրով Դ դարէն, կը կարգանք՝ որ կենտրոն մէջ ս. Գրիգորի «եղիւն ի վերայ զձեռն ժողովք եպիսկոպոսացն սրբոց»⁸։ Նոյն քաղաքի արքեպիսկոպոսն Եւսեբի՝ «ըստ կանոնաց օրինակի ժողովէր առ ինքն... զբազմօրին եպիսկոպոսացն սրբոցն ըստ առաքելական օրինացն, զի ձեռնադրեցնցն զսուրեն Ներսէս»⁹։ Արշակ ուզելով փոխել զՆերսէս, հրամայեց «կոչել զամենայն եպիսկոպոսս Հայոց աշխարհին, զի

եկեցեցն ձեռնադրեցնցն զՉոսեան ի կաթողիկոսութեան Հայոց»¹⁰։ և երբ անոնք յանձն չափն այդ անիրաւութիւնը, Աղձնեաց ու Կորդուաց երկու եպիսկոպոսաց միայն ձեռնադրել տուաւ¹¹։ Զ դարուն Ներսէս աշտարակեցին առ ուղղափառ Ասորիս ընծայականին մէջ կ'իմացնէր՝ թէ «ձեռնադրեցաք զայդ ընտրեալ զԱրզիսոյ ի մեծապատիւ աստիճան քահանայապետութեան՝ ամենայն եպիսկոպոսք աշխարհիս»¹²։ Թ դարուն «ժողով եպիսկոպոսաց յեւ ի քաղաքագիւղն Երուզղատրս, ձեռնադրեն ի հայրապետութիւն զՋաքարիս»¹³։ Ընդ հակառակն Մատթէոս կը պատմէ Պետրոսի հակառակթոռ Գիոսկոպոսի համար՝ թէ «ի ձեռնադրութիւն Նորա ոչ ժողովեցան եպիսկոպոսք և քահանայք և հայրապետ»¹⁴։ Ինչ որ բնական էր։ Զոնակի դիպումին կրկնութիւնը։ 1076ին և 1113ին «եղև ժողով եպիսկոպոսաց... ձեռնադրեցին» զՍարգիս ու զԳրիգորիս¹⁵։ Շնորհակալին իւր ատենաբանութեան մէջ կ'ըսէր։ «Առ ձեզ են բանք իմ, դասք արքազանից քահանայապետաց» և այլն, որ ժողովեցաք «ի հրամանէ զլիոյս եկեղեցւոյ, որպէս զի նովաւ և ընդ նմին» ձեռնադրէք զիս¹⁶։ Վերջապէս Սոյ 1342ի ժողովը կը վկայէ՝ թէ Հայոց հայրապետը կը ձեռնադրուէր տակաւին «զօրծակցու թեամբ եպիսկոպոսաց կամ արքեպիսկոպոսաց»¹⁷։

Միջին դարուն ջանք մը կը տեսնուի սահմանաւորելու ձեռնադրիչ եպիսկոպոսաց թիւը։ Կիրակոս կը պատմէ թէ 1139ին Գրիգորիս կաթողիկոս ուզելով Աղուանից հովուապետ մը տալ, երկու եպիսկոպոս կը յղէ անոնց, որոնք հոն նախ «ձեռնադրեն այլ ևս եպիսկոպոս երկոտասան» ըստ օրինի հրամանաց զորց, և ապա ձեռնադրեն զԴազիկ կաթողիկոս¹⁸։ Եթէ ըստ այդգ է տեղեկութիւնդ, հող արդէն ճշդուած թիւ մ'է առաքելագումար երկոտասանը,

1. Անդ՝ 85, 56. — 2. Անդ՝ 207, 218. — 3. Անդ՝ 56. — 4. Անդ՝ 77, 253, 254. — 5. Աւթ. 604. — 6. Փաւս. 72. — 7. Նոյն. 128. — 8. Գր. Թղթ. 57

— 58. — 9. Գ. Կթդ. 161. — 10. Ուս. 88. — 11. Նոյն՝ 253, 412. — 12. Նոյն. 5. — 13. Mansi, XXV, 1261. — 14. Կերթ. վսեմ. 1865. 101.

որոյ հետ անկասկած կապ ունի լամբրո-
նեան կանոնին նշանակած հայրապետա-
կան ընտրութիւնն ալ «երկտասան եպիս-
կոպոսը»։ և ուսկից անկախ չէ անշուշտ
Մարոնեանց ծախման ընտրութիւնն ևս։
ԺԳ դարուն շատ տիրապետող է արդէն
այդ թիւը, որ Գանձակեցուն կը թելա-
զրէ «ըստ օրինի հրամանաց գրոց» բա-
ցատրութիւնը։ Եւ ԺԵ դարուն թովմա մե-
ծօփեցին կրնար այլ ևս ըսել՝ թէ «ԺԲ
եպիսկոպոս զկաթողիկոս օծանին ըստ
Հայոց»։ և թէ կիրակոս վիրապետին «եր-
կուտասն եպիսկոպոսը և երկուտասն վար-
դապետը ի քահանայապետութեան աս-
տիճան հասաւ»։

2. Մեր յիշած բոլոր վկայութեանց
մէջ այնպէս կը կարդանք՝ թէ ներկայ
ամբողջ եպիսկոպոսունը միասին ձեռք կը
դնէին ընծայելոյն վրայ, եթէ ըստ տա-
սին առնուինք բացատրութիւնը, նիւթա-
պէս կարելի չպիտի լինէր այդ միջոց, նկա-
տելով որ շատ բազմութեան պարագային
հնարաւոր չէր բոլորին միանգամայն մեր-
ձենալ ձեռնադրելոյն։ Ուստի կարելի է
նաեւ որոշ թիւ մ'իմանալ, գուցէ դարձեալ
երկուտասն, և ձեռնադրութիւնը լայնօրէն
վերազրուած ամենուն։ Վասն զի երկուտա-
սանին ստոյգ չըլծանին ալ, յորում կը գրէր
Սիւնեաց պատմիչը, իրենց վահան եպիս-
կոպոսին համար կը գործածէ անորոշ թիւը,
ըսելով՝ թէ 968ին «դնեն ձեռն ի վերայ
բազմաորին եպիսկոպոսաց, և օծանեն զնա
կաթողիկոս Հայոց»¹, փոխանակ գրեթե
երկուտասն եպիսկոպոսաց, և յայտնա-
պէս փոխ առնելով Փաւստոսի բացատրու-
թիւնը Ներսէսի մասին, Նիմանպէս կա-
թողիկոսօրհնէրը գրելով՝ թէ «մայրաքա-
ղաքացի եպիսկոպոսն ասէ՝ ձեռնադրու-
թեան ըսնածներ, չի ճշդեր՝ ձեռք զնձդ
ալ ինքն էր միայն, թէ միւսեորուն հետ
միասին, և իւրաքանչիւրն իւր հաշուին
կ'ըսէր՝ և ես զնեմ ձեռն ի վերայ»։

Վերջապէս բոլոր վկաներէն կ'ուսա-

նինք՝ որ նոյն ինքն եպիսկոպոսութենէ
կոչուած հայրապետաց վրայ ևս ի գործ
կը դրուէր առաքելական ձեռնադրութիւն
խի, որ յատուկ էր՝ ըսինք՝ ս. Կարգի
երեք աստիճանաւորաց։ Ուրեմն հասարակ
օրհնութենէ վեր բան մ'էր արարուա-
թիւնդ ըստ արտաքին եղանակին, թէ և
զայն հաստատողաց ստոյգ դիտաւորու-
թիւնը չենք գիտեր։

3. Ասոր մէջ կը մտնէր Աւետարանի
գործածութիւնն ալ։ Սահմանադրութիւնը
առաքելից կը գրեն՝ թէ «սարկաւագունքն
զանտարանն բաց՝ կայցին ի վերայ գլխոյ
որում ձեռնադրին»²։ Այս սովորոյթը մնաց
ու կը մնայ տակաւին արեւելեան և ա-
րևմտեան եկեղեցեաց մէջ։ Մեր վերոյի-
շեալ արեւելեան ծիսարաններէն յայտ-
նապէս կը յիշուի այն. Նոյնպէս և մեր
ըով։ Շնորհալին կը ձեռնադրէ կարուց
խաչատուր եպիսկոպոսը՝ «կենսակիր խա-
չիւս և աստուածաբոս աւետարանաւ և
ս. Լուսաւորչին աշովս»³։ Լամբրոնացին
նոյնպէս կը յիշէ՝ թէ «զանտարանն դնեն
ի վերայ պարանոցին» եպիսկոպոսի՝ Նոյ-
նը կը դրուէր նաեւ մեր հայրապետաց
վրայ՝ ցորչափ անոնք կը ստանալին լոկ
եպիսկոպոսական աստիճանը. այսպէս Լու-
սաւորիչ կը ձեռնադրուի «որքով աւետա-
րանաւ»⁴։ Ինչպէս է՝ որ նոյնպէս մնացած
լինի՝ նաեւ երբ հայրապետական ձեռնա-
դրութիւնը կը տրուէր եպիսկոպոսականին
կրկնութեամբ, և որ հաւանօրէն պահուե-
ցաւ նաեւ նորակազմ կաթողիկոսօրհնէից
հետ, թէ և չի յիշուի համառոտութեան պատ-
ճառաւ։

4. Պարագայ մը կը պատմէ Ստյ 1342ի
ժողովը։ «Յաւուր ձեռնադրութեան անդ
(կաթողիկոսին), կ'ըսէ, թագաւորն ինք-
նին ծուռէ կրկնեալ՝ զնէ զմատանիւն ի մատն
նորին, համարելելով զաջն, և դառնայ ի
տեղի իւր, և յայնժամ առնուն զնա ա-
ռաջնորդքն և ձեռնադրեն ըստ օրինի կա-
թողիկոսութեան»⁵։ Սայտնի է՝ որ հող


1. Գրչ. Թ. 1599 46. Ս. Ղլր. — 2. Օրհնեան,
Սոսկուս, 1861, 211. — 3. Գրչ. Բ, 91. 71 — 4.

Ն.Պ. 213. — 5. Մեկն. պորգ. վնեւ. 1847, 206.
— 6. Աղաթ. 604. — 7. Mausi, XXV, 1258.

թագաւորը խորհրդարար կը յանձնէր աւնոր հայրապետական իշխանութիւնը՝ զայն ընտրող ազգին կողմանէ զոր ինք կը ներկայացնէր։ Կաթողիկոսօրհներ չէ յիշած մատանւոյն տուչութիւնն այդ առթիւ, և կիլիկիան գրեւտ լինելու է։ Երբ Գր. Առնաւորեցիին կը ձեռնադրուէր 1293ին, Կանչոյ իշխանն (Չիլն) ևս անոր մատանի մը կը յղէ, ինքն իսկ տալով անոր իմաստն ալ. «Մատանիս այս շնորհաւոր՝ քեզ հըրաւէր հասցէ ի Տէր, — ի գուշակ այս պետութեան լինել չայոց հովիւ և տէր. — Ոսկիք՝ որ ման առեալ, ըզմողովուրդը ըողցուանէր, — Եւ անկըզ պատուական ըզմաքրութիւնդ արոտայալտէր »:

(Շարունթակիլի)

Հ. Ա. ՀԱՅՈՒՆԻ



ՍԱՓՈՐ, ՄԱՐ, ԹԱԿՈՅԿ, ՍՐՈՒԱԿ

Սափոր կամ մար, Թակոյկ, զոր յունք ἀμφωρεός և լատինք amphora կը կոչեն, է երկունկնէր գինու կամ ջրոյ թրծեալ կաւէ աման, որ և Յունաց և Հռովմայեցւոց մէջ՝ բոլրէ չափ ևս զործածուած է։ Կայեղանոս Մարինի ունի անտիպ ուսումնասիրութիւն մը Վատիկանի գրատան մէջ, որ կը խօսի գրեթէ 1500 աղիւններու վրայ, որոնք իրենց վրայ ունին դրոշմներ, պատկերներ և գրութիւններ և կը կոչուին estampilles doliaires աղիւնք երկայնաձև պատկերներով¹։ Մոյն կերպով պատկերներ կը գտնենք կաւէ շինուած երկաւ-

րաձև երկունկով սափորներու վրայ ոչ միայն հնթանոսական այլ և քրիստոնէական դարու յատուկ, որոնք ոչ սակաւ պատմութեան և դիպումներու լուսարարութիւն կ'ընծայեն։ Նախ աղիւսը և ապա սափորը կրեցին իրենց զործարարին կնիքը, որ ընդհանրապէս կը ձևանար գործարանին տիրոջ անունն սկզբնատառերով, կամ անոր գինանշանով։ Յետոյ պատկերներ, խորհրդանշներ կերտուեցան ևս սոնց վրայ, ինչպէս նշանաւոր դէպքերու բարձրաքանդակ նկարներ կամ տեսարաններ։ Սափորը ազգաց ճարտարարուեստին և ճաշակաց համեմատ կը կրեն փոփոխութիւններ, բայց ընդհանրապէս ձևերը՝ սակաւ տարբերութիւնք ունին։ Քրիստոնէական դարէն կան ասոնցմէ հռովմէական գեանադարաններու մէջ, ինչպէս կալիստոսի գեանադարանին մէջ և այլուր. ուր սափորաց վրայ նկարուած կը գտնենք ազապաց՝ սիրոյ ճաշին պատկերը։ Քրիստոնէական 303 թուականին Գիովղոսիոս Նոսի օրով Սիրզայի մէջ կար եկեղեցի մը, որոյ մէջ կը պահուէին զգեստներ, և սեւ դանատան մէջ կը գտնուէին՝ ուր ազապը կը կատարուէին՝ չորս տակառներ և վեց սափորներ (dolia quattuor et orcae sex)։ Տակառը կը պարունակէին գինի և սափորը՝ իւղ։ Գաւեստներ կը յիշատակէ, որ Մոսինայի մերձ գտնուէր է թրծեալ կաւէ սափոր մը որուն վրայ նկարուած է երկու դէմ առ դէմ կեցած ձուկեր, որոնց մէջ կար Յիսուսի՝ Քրիստոսի սկզբնատառերը. սա երրորդ դարու զործ է և կը համարուի, որ կը զործածուէր ազապաց

1. Չամչ. Պատ. Գ, 289:

2. Այս տեսակ երկար և լայն թրծու աղիւններով շինուած ևս Նիկոմիդիոյ քաղաքին արեւմտեան հիւսիսային կողմը Գիովղոսիոսի մնացած ճատամուր պարիսպները, որոնց խարխիւր կը ձեռնադրէին 1¹/₂ մեդր երկայնութեամբ՝ զուցէ աւելի ևս ըլլան՝ սորատալ քարեր մի մեդր լայնութեամբ, որոնք վառողի ուժով հազիւ կը քայքայուէին և քառորդ դար առաջ աստ և անգ շինուածներու զործածուած են։ Ասոնցմէ ոչ այնչափ հնու ըլլան մը ստորոտը պեղել արուած պահուած քաղաքեան գերեզմաններ ուղիւստով, զոր կը զոցէին վերոյիշեալ թրծեալ լայն և երկար աղիւնները՝ վրանին զրոշմնիր։

Երեսուն տարինիս առաջ տգիտութիւնն և երկիւղը զասոնց աներեւոյթ ըրին և այդ ընդարձակ երկերը թրծատանի վերածուեցաւ, և այժմ անապատ զարծած է։ Ասոնց մօտ՝ զեպ ի ձովկզբը՝ կայարանի մերձ՝ քարձուրացաւ երկայնութեան 46 մեդր երկայնութեամբ քարաշէն Միխրիսեան վանատունը, վարժարանն և եկեղեցին՝ ճիշտ հռովմէական քաղաքեան տեղը. շէնքին անկանց խարխիւրներուն մի մասը կը կազմեն այդ սորատալ քարերը, իսկ իւր հիւսիսային կողմի հնաշէն պարիսպներուն ներքե կան երկար կամարակապ ճանապարհներ, երկար և լայն աղիւններով հիւսուած, որոնք ըստ աւանդութեան դիովղոսիոսի զորուն կը վերաբերին։